Հաստատում եմ՝

Ռուս-Հայկական համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր փ.գ.դ., պրոֆեսոր

Ղ.Ս. Ավետիսյան

17.06.2026 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Բագրատ Լեոնիկի Վարդանյանի **«Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ:

<u>Հաստատվել է</u>

Ռուս-Հայկական համալսարանի Կ.Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի 2026թ.-ի հունիսի 16-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Մարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու ավագ դասախոս Ն.Ի. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու ավագ դասախոս Ի.Ա. Քարամյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը:

Բագրատ Լեոնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ժամանակակից գիտական օրակարգին: Աշխատանքում ներկայացված են ընտրված թեմայի արդիականությունն ու նշանակությունը՝ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հարթություններում: Հետազոտությունն աչքի է ընկնում նրանով, որ համադրում է կենսաբանական սպառնալիքների կառավարման արդյունավետության վերաբերյալ համաշխարհային մոտեցումների ուսումնասիրությունը կենսանվտանգության ապահովման գործընթացում քաղաքական ինստիտուտների դերի և դրանց կայունության նշանակության վերլուծության հետ՝ հաշվի առնելով ՀՀ պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը հստակ ձևակերպված է՝ բացահայտել և համակողմանիորեն վերլուծել Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության համակարգի կայացման նախադրյալները և գիտագործնական առումով հիմնավորել ոլորտում կառավարման կենտրոնացված մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը: Հետազոտության ընթացքում հեղինակը ներկայացրել է կենսանվտանգության հասկացության բովանդակությունը, ընդգրկման շրջանակներն ու պատմական էվոլյուցիան, ուսումնասիրել միջազգային փորձը և զարգացած երկրների մոդելները, ինչպես նաև գնահատել Հայասատնի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող իրավաքաղաքական միջավայրը:

Մյուս կողմից, կենսանվտանգության ապահովման գործընթացի վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, ձևավորելու կառավարման առավել արդյունավետ մեխանիզմներ և ապահովելու հանրային քաղաքականության համապատասխանելիությունը ժամանակակից գլոբալ և տեղական մարտահրավերներին: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման

նախադրյալների ուսումնասիրությունը կարող է հանդես գալ որպես գործնական հենք պետական կառավարման բարեփոխումների իրականացման և երկարաժամկետ կայուն զարգացման ռազմավարությունների մշակման համար:

Ատենախոսության կառուցվածքը ընդհանուր առմամբ համապատասխանում է գիտական տրամաբանությանը, որը բխում է հետազոտության խնդիրների հաջորդական լուծման անհրաժեշտությունից:

Առաջին գլխում հեղինակը ուսումնասիրում է «կենսանվտանգություն» եզրույթի բովանդակային ընկալումն ու ընդգրկման շրջանակները, ինչպես նաև վերջինիս տեղն ու դերը պետության ազգային անվտանգության համակարգում: Հատկանշական է այն, որ հեղինակը ընդգծում է «կենսանվտանգություն» հասկացության գոյություն ունեցող սահմանումների տեսահայեցակարգային թերությունները և ըստ այդմ առաջարկում է հասկացության նոր սահմանում:

Երկրորդ գլխում ներկայացվում է քաղաքական ինստիտուտների դերը կենսաբանական սպառնալիքների կանխարգելման գործընթացում: իրականացվում է նաև կենսանվտանգության ապահովման պրակտիկաների՝ տնտեսապես զարգացած երկրների փորձառության ուսումնասիրություն՝ ընդգծելով կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետությունը տարբեր երկրների համապատկերում: Հեղինակը հակված է այն դիրքորոշմանը, որ կենսանվտանգության ապահովման ոլորտի ապակենտրոնացված կառավարման մոդելն թերևս գործունակ է միայն հարաբերականորեն կայուն, ոչ ճգնաժամային իրավիճակներում, սակայն գլոբալ համավարակների կամ կենսաբանական ահաբեկչության պայմաններում հիշյալ մոդելը վերածվում է անարդյունավետ և իներտ համակարգի՝ պայմանավորված տեղեկատվության փոխանակության խնդիրներով, միջգերատեսչական մրցակցությամբ և որոշումների կայացման դանդաղկոտությամբ:

Երրորդ գլխում հեղինակը անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման գործընթացի ներկա վիճակը, ինչպես նաև ոլորտում պետական-քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական մոտեցումներն ու

մեխանիզմները: Այս գլուխը կարելի է դիտարկել իբրև ատենախոսության բուն կիրառական ներդրումը: Հատկապես արժեքավոր է ՀՀ կենսանվտանգության ոլորտի կառավարման համալիր մոդելի նկարագրությունը, որտեղ հստակ սահմանվում են ոլորտին առնչվող մասնագիտական և օպերատիվ գործառույթները, ինչպես նաև դրանց իրականացման համար պատասխանատու գերատեսչությունները:

Ատենախոսության գիտական նորույթը հստակ ձևակերպված է: Աշխատանքի շրջանակներում հայաստանյան հետազոտական դաշտում իրականացվել է կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերի համալիր և համակարգված վերլուծություն քաղաքական գիտության տեսանկյունից՝ ապահովելով թեմայի նկատմամբ գիտականորեն նոր հայացք: Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նաև նրանով, որ այն ուսումնասիրում է կենսանվտանգության տեսական հիմքերից մինչև գործնական բարեփոխումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ առանձնահատկություններին:

Ատենախոսությունը ներկայացնում է համակցված մեթոդաբանական մոտեցում, որը միաժամանակ ընդգրկում է որակական և քանակական հետազոտական մեթոդներ: Հետազոտության տեսական մասը ներառում է գիտական գրականության վերլուծություն՝ բացահայտելու «կենսանվտանգություն» հասկացության ծագումնաբանությունը, զարգացման փուլերը և բովանդակային փոխակերպումները: Էմպիրիկ ուսումնասիրությունը իրականացվել է համեմատական և համակարգային-կառուցվածքային մեթոդների միջոցով՝ գնահատելու ՀՀ պետական կառավարման առանձնահատկությունները և դրանց դերը կենսաբանական սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարի ապահովման գործում:

Հետազոտությունն ունի գիտական և աղբյուրագիտական հենք. մասնավորապես, օգտագործվել են ատենախոսության թեմային առնչվող ինչպես ակադեմիական գրականություն, այնպես էլ ռազմավարական և հայեցակարգային

փաստաթղթեր, օտարերկրյա կազմակերպությունների համացանցային պաշտոնական կայք-էջերում տեղ գտած տեղեկություններ ու տվյալներ:

Աշխատանքի կիրառական նշանակությունն այն է, որ ուսումնասիրման արդյունքները արդյունքները, տեսական և գործնական ընդհանրացումներն ու ներկայացված առաջարկությունները կարող են օգտակար լինել գիտաուսումնական տեսանկյունից, ինչպես նաև պետական կառավարման, վարչական բարեփոխումների մշակման և պետական քաղաքականության արդյունավետության գնահատման գործընթացներում: Աշխատանքի եզրակացություններն ու առաջարկությունները կարող են կիրառվել ոլորտը կարգավորող հայեցակարգային փաստաթղթերի և իրավական ակտերի մշակման, առկա օրենսդրական բացերի վերացման, ինչպես նաև ճգնաժամային կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման գործընթացներում:

Հաշվի առնելով իրականացված ուսումնասիրության առավելություններն ու գիտական արժեքը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտողություններ, մասնավորապես.

1. Թեև առաջին գլխում հեղինակը անդրադառնում է կենսանվտանգության տեսական հիմքերին, աշխատության ընդհանուր բովանդակությունը, հետազոտական շեշտադրումները և ուսումնասիրության հիմնական առարկան հիմք են տալիս ենթադրելու, որ ատենախոսությունն առավելապես համապատասխանում է ԻԳ-00-02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտական դասիչին, քան ԻԳ-00-01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտական դասիչին:

2. Աշխատության կառուցվածքում առկա է որոշակի անհամաչափություն: Չնայած այն հանգամանքին, որ ատենախոսության վերնագրում շեշտադրվում են կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը ՀՀ-ում, Հայաստանի կենսանվտանգային քաղաքականությանը նվիրված է աշխատության 169 էջերից ընդամենը 29-ը:

3. Չնայած այն հանգամանքին, որ երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է ԱՄՆ-ի և ՌԴ-ի ազգային անվտանգության ապահովման ինստիտուցիոնալ

կառույցները, նպատակահարմար կլիներ, որ աշխատության տեսական հատվածում առանձին անդրադարձ կատարվեր կենսանվտանգության տեղին ու նշանակությանը ազգային անվտանգության համակարգում, ինչպես նաև «ազգային անվտանգություն» հասկացությանը:

4. Աշխատանքի առաջին գլխում հեղինակն օգտագործում է միջազգային պրակտիկայում կիրառվող և տարբեր տեսական դպրոցներին բնորոշ հասկացություններ (օրինակ՝ կենսանվտանգություն (Biosafety), կենսապահովություն (Biosecurity), կենսապաշտպանություն (Biodefense)): Սակայն հեղինակը չի հստակեցնում թե բուն հետազոտության և ՀՀ ազգային անվտանգության ճարտարապետության շրջանակներում այս հասկացություններից որն է ընդունվում որպես հիմնական (բազային), կամ արդյոք դրանք հեղինակի կողմից նույնացվում են: Այս տերմինաբանական և կոնցեպտուալ անորոշությունն կարող է հանգեցնել մեթոդաբանական խառնաշփոթի և թույլ չի տալիս հստակ ընկալել, թե հեղինակի կողմից առաջարկվող պետական կառավարման համակարգը կոնկրետ որ սպառնալիքների չեզոքացմանն է առավելապես միտված լինելու:

5. 1.1 «Կենսանվտանգություն» հասկացության սահմանումը, ընդգրկման շրջանակները և բովանդակային փոխակերպումները» ենթագլխի տարբեր հատվածներում հեղինակը անդրադառնում է «կենսաբանական ահաբեկչություն» հասկացությանը՝ այն դիտարկելով որպես կենսաբանական սպառնալիք կամ, ըստ Կոբլենցի դասակարգման, կենսանվտանգության հիմնական ոլորտներից մեկը (էջեր 17, 23): Սակայն տվյալ հասկացությունը բացակայում է 1.2 «Կենսաբանական սպառնալիքների տեսակները և քաղաքական առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված սպառնալիքների շարքում: Վերոնշյալ ենթագլուխը ներառում է նաև մի շարք կենսաբանական սպառնալիքների նկարագրություններ և պատմական ակնարկներ, սակայն լիովին հստակ չէ, թե ինչպես են այդ սպառնալիքները ազդում քաղաքական ոլորտի վրա կամ ձևավորվում դրա հետ փոխազդեցության արդյունքում, ինչը ենթագլխի վերնագրի տրամաբանությունից բխող կարևոր հարցադրում է:

Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն հիմնավորված գիտագործնական նշանակություն:

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ վերոնշյալ թերությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը, և **Բագրատ Լեոնիկի Վարդանյանի «Կենսանվտանգության ապահովման ներպետական և միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, երաշխավորվում է հրապարակային պաշտպանության, իսկ ատենախոսը՝ հաջող պաշտպանության դեպքում, արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Ռուս-Հայկական համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ.Սարգսյան

փ.գ.թ., դոցենտ Հ.Լ.Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Գ.Գասպարբովա